ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՍԵՐԳԵՅԻ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԺԳ. 00. 02 - «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (երաժշտություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Յուրի Վաղարշակի Յուզբաշյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Լեմս Սուրենի Ներսիսյան**

արվեստագիտության թեկնածու, դոցենտ՝ **Ծովինար Հրայրի Մովսիսյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2024թ. հուլիսի 4-ին ժամը 12:00-ին Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010 ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024թ. մայիսի 31- ին:

Մանկավարժության 020 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ **Թերեզա Յուրիի Ազատյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության արդիականությունը. Սփյուռքահայ գաղթօջախների ժամանակակից կյանքի մշակութային և կրթական գործընթացներում ներկայումս առաջացել է կրթադաստիարակչական մի շարք խնդիրների փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական ըմբռնման նոր մակարդակ, որի համատեքստում անհրաժեշտություն է դարձել դիտարկել նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման հիմնախնդիրը:

Սփյուռքահայ երեխաների նախադպրոցական կրթությունն այսօր բախվում է երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման արդյունավետ ուղիներ գտնելու և դրա մանկավարժական աջակցության հրատապ անհրաժեշտության հետ, ինչը և մեր հետազոտությունը դարձնում է խիստ արդիական:

Ուստի ներկայումս առանձնահատուկ շեշտադրվում է նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման տեսական և մեթոդաբանական սկզբունքների ու մոտեցումների մշակման անհրաժեշտությունը:

Հոգեբանական, մանկավարժական, մեթոդական գրականության և պրակտիկայում առկա իրավիճակի վերլուծությունը հնարավորություն տվեց բացահայտել երաժշտության դասերին նախադպրոցականների ազգային ինքնության, երաժշտական ընդունակությունների զարգացման գործընթացում առկա հակասությունները, որոնց լուծման անհրաժեշտությամբ է պայմանավորված մեր հետազոտության հիմնախնդրի արդիականությունն ու հետազոտության թեմայի ընտրությունը:

Հետազոտության նպատակը ազգային երաժշտության միջոցով սփյուռքում ապրող նախադպրոցական տարիքի հայ երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման մեթոդական համակարգի, դրա կիրառման մանկավարժական պայմանների մշակումն ու մոդելավորումն է:

Հետազոտության օբյեկտը սփյուռքահայ երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման գործընթացն է:

Հետազոտության առարկան ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման մեթոդական համակարգն է:

Հետազոտության գիտական վարկածն այն է, որ ազգային երաժշտության միջոցով սփյուռքի նախադպրոցական տարիքի հայ երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացումը կլինի արդյունավետ, եթե՝

1. ուսումնասիրվեն, վերլուծվեն և որպես ատենախոսության մեթոդաբանական հիմք դիտարկվեն հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներն ու տեսությունները,
2. բացահայտվեն և հիմնավորվեն հայ երաժշտության դաստիարակչական ներուժը, նրա առանձնահատուկ դերն ու նշանակությունը նախադպրոցական երեխաների ազգային ինքնության և երաժշտական

ընդունակությունների զարգացման գործընթացում,

3. բացահայտվեն և բնութագրվեն հայ երաժշտության ուսուցման գործընթացում նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման սկզբունքները, օրինաչափությունները և առանձնահատկությունները,
4. երաժշտական ստեղծագործությունների ընտրության և ուսումնասիրման ընթացքում հաշվի առնվեն դրանցում ազգային հատկանիշների, մտածելակերպի, հոգեկերտվածքի, արժեհամակարգի արտացոլման աստիճանը, ինչպես նաև նախադպրոցականների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
5. սահմանվեն հայ երաժշտության ուսուցման գործընթացում նախադպրոցական տարիքի հայ երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացվածության մակարդակները բնութագրող չափանիշներն ու ցուցանիշները,
6. մշակվեն, նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացմանը նպաստող համապատասխան ծրագիր, դրա արդյունավետ իրականացման մեթոդական համակարգ ու դրա կիրառմանն ուղղված մանկավարժական պայմաններ:

Հետազոտության խնդիրները. Հետազոտության նպատակին ու գիտական վարկածին համապատասխան ձևակերպվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

1. ուսումնասիրել, վերլուծել և որպես ատենախոսության մեթոդաբանական հիմք դիտարկել հիմնախնդրի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներն ու տեսությունները,
2. բացահայտել և բնութագրել հայ երաժշտության ուսուցման գործընթացում նախադպրոցականների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման կապը, սկզբունքները, օրինաչափությունները և առանձնահատկությունները,
3. երաժշտական ստեղծագործությունների ընտրության և ուսումնասիրման ընթացքում հաշվի առնել դրանցում ազգային հատկանիշների, մտածելակերպի, հոգեկերտվածքի, արժեհամակարգի արտացոլման աստիճանը,
4. սահմանել հայ երաժշտության ուսուցման գործընթացում նախադպրոցական տարիքի հայ երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացվածության մակարդակները բնութագրող չափանիշներն ու ցուցանիշները,
5. մշակել, գիտափորձով հիմնավորել և սփյուռքի հայ կրթարաններում ներդնել նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացմանը նպաստող երաժշտության ուսուցման փորձարարական ծրագիրը, մոդելավորել դրա իրականացման մեթոդական համակարգն ու անհրաժեշտ մանկավարժական պայմանները:

Հետազոտության մեթոդաբանական հիմք են հանդիսացել. «Ազգային ինքնություն», «երաժշտական ընդունակություններ» հասկացությունների

բնութագրմանը և վերլուծությանը, երաժշտության ուսուցման կարևորության հիմնավորմանը նվիրված հայ և արտերկրյա փիլիսոփաների հայեցակարգային մոտեցումներն ու տեսությունները (Պլատոն, Արիստոտել, Դ. Անհաղթ, Ն. Շնորհալի, Հ. Որոտնեցի, Գ. Տաթևացի, Ա.Ա. Ադամյան, Յա.Ի. Խաչիկյան, Ս.Ա. Զաքարյան, Հ.Ղ. Միրզոյան, Ա.Ա. Նալչաջյան, Ա. Կիրակոսյան, Մ.Մ. Կագան և այլք), նախադպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին նվիրված տեսությունները, ազգային ինքնության ձևավորման և ընդունակությունների զարգացման, այդ գործընթացի մեթոդական ապահովման վերաբերյալ փիլիսոփայական և հոգեբանամանկավարժական հայեցակարգերը (Ա.Խ. Մովսիսյան, Մ.Հ. Սանթրոսյան, Մ.Ա. Մազմանյան, Հ.Մ. Թութունջյան, Ա.Ա. Նալչաջյան, Կ.Դ. Ուշինսկի, Ժ. Պիաժե, Վ.Ս. Վիգոդսկի, Ա.Ն. Լեոնտև, Վ.Վ. Դավիդով, Դ.Բ. Էլկոնին, Բ.Մ. Տեպլով, Ա.Վ. Զապորոժեց, Հ. Վենգեր, Է.Ի. Նազայկինսկի, Վ.Ի. Պետրուշին, Գ.Մ. Ցիպին, Գ.Ս. Տարասով, Յու.Վ. Յուզբաշյան, Լ.Թ. Ասատրյան, Ժ.Ս. Գրիգորյան, Ա.Ա. Բալյան, Ն.Ա. Վետլուգինա և այլք):

Երեխաների ազգային ինքնության զարգացման մեթոդաբանական հիմք են ընդունվել նաև հոգեբանական, մանկավարժական, երաժշտագիտական, գեղագիտական, երաժշտամանկավարժական լավագույն փորձը (Գ. Գապասաքալյան, Կոմիտաս, Սպ. Մելիքյան, Ռ. Մելիքյան, Ք.Ս. Քուշնարյան, Ռ.Ա. Աթայան, Գ.Շ. Գյոդակյան, Ն.Կ. Թահմիզյան, Մ.Ա. Բրուտյան, Ա.Ա. Փահլեվանյան, Յու.Վ. Յուզբաշյան, Դ.Բ. Կաբալևսկի, Օ.Ա. Ապրակսինա, Ն.Ա. Վետլուգինա, Պ.Ֆ. Վեյս և այլք):

Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են **տեսական և էմպիրիկ հետազոտության հետևյալ մեթոդները.**

- **տեսական՝** հետազոտության հիմնախնդիրներին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, ազգագրական, սոցիոլոգիական, մեթոդական և մասնագիտական գրականության ուսումնասիրություն և վերլուծություն,
- **էմպիրիկ՝** դիտում, զրույց, անկետավորում, հարցազրույց, մոդելավորում, գիտափորձ՝ հաստատող և ձևավորող փուլերով, փորձարարական հետազոտության ընթացքում ստացված տվյալների մշակման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության բազա է հանդիսացել Բեյրութի Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեջի Սիրան Մանուկեան մանկապարտեզը:

Հետազոտության գիտական նորույթը.

1. Փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, մշակութաբանական և ազգագրական տեսանկյունից բացահայտվել և հետազոտության հիմնախնդրի տեսանկյունից նորովի է մեկնաբանվել «ազգային ինքնագիտակցություն», «ազգային ինքնություն» և «երաժշտական ընդունակություններ» հասկացությունների էությունը:
2. Առաջին անգամ սփյուռքում (Լիբանանում) կատարվել է հետազոտական աշխատանք՝ ուսումնասիրվել է հայ երաժշտության կարևոր դերն ու նշանակությունը սփյուռքահայ նախադպրոցական տարիքի երեխաների

ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման գործընթացում:

3. Բացահայտվել և բնութագրվել են երաժշտության ուսուցման գործընթացում նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման սկզբունքները, օրինաչափությունները և առանձնահատկությունները:
4. Սահմանվել են հայ երաժշտության ուսուցման գործընթացում նախադպրոցական տարիքի սփյուռքահայ երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման մակարդակները, դրանց չափանիշներն ու ցուցանիշները:
5. Մշակվել է երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացմանը նպաստող կրթական ծրագիրը, մոդելավորվել է դրա արդյունավետ ներդրման մեթոդական համակարգը, որը ներառում է երաժշտություն և ռիթմիկա առարկայի բովանդակությունը, ուսուցման սկզբունքները, ձևերը, մոտեցումները, միջոցները, մեթոդները, տեխնոլոգիաները, ստեղծագործական առաջադրանքները, ակնկալվող արդյունքները և դրանց կիրառման արդյունավետությունն ապահովող մանկավարժական պայմանները:

Հետազոտության տեսական նշանակությունը.

1. Հետազոտվող հիմնախնդրի շրջանակներում ձևակերպվել և համակարգվել են նախադպրոցականների ազգային ինքնության բովանդակության վերաբերյալ տեսական հայեցակարգերը, ճշգրտվել են ազգային ինքնության կառուցվածքային բաղադրատարրերը, զարգացվածության մակարդակները և չափանիշները:
2. Հետազոտության բովանդակությունը, ստացված արդյունքները, եզրակացությունները, մեթոդական մշակումները կհարստացնեն երաժշտական մանկավարժությունը տեսական նոր դրույթներով և մոտեցումներով:

Հետազոտության գործնական նշանակությունը՝ աշխատանքը կարող է գործնական օգնություն լինել ՀՀ և սփյուռքի նախադպրոցական հաստատությունների երաժիշտ-մանկավարժների համար ազգային երաժշտության դասավանդման և հայ երեխաների ազգային ինքնության պահպանման գործընթացում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները.

1. Սփյուռքահայ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է արդի ժամանակաշրջանում իրականացող աշխարհաքաղաքական տեղաշարժերով, գլոբալացման գործընթացներով, որոնց պայմաններում առանձնակի շեշտադրվում են սփյուռքում ապրող յուրաքանչյուր հայ երեխայի հայ մնալու համար անհրաժեշտ գործոնները՝ լեզուն, երաժշտությունը, մշակույթը, պատմական հիշողությունը:
2. Նախադպրոցական տարիքի հայ երեխաների ազգային, հոգեբանական և տարիքային առանձնահատկությունների հաշվառումը երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման գործում ունի առանցքային նշանակություն:

3. Նախադպրոցական տարիքի հայ երեխաների ազգային ինքնության զարգացվածության չափանիշները բնութագրում են նրանց ազգային երաժշտության ընկալման մակարդակը, իմացական-ճանաչողական, հուզական-զգացմունքային, արժեքային-գնահատողական ոլորտները, ազգի երաժշտական մշակույթի ձևավորման պատմական ակունքները:
4. Երեխաների երաժշտական գործունեության տեսակների ընտրությունը, երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացումը փոխկապակցված են:
5. Մշակված մեթոդիկան և առաջարկվող մանկավարժական պայմանները, նախադպրոցական հաստատությունում երաժշտության ուսուցման նոր ծրագրի ներդնումը, որում ընդգրկված հայ երաժշտության նմուշներն ունեն ընդգծված ազգային բովանդակություն, նպաստում են սփյուռքահայ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացմանը:

Հետազոտության արժանահավատությունն ու հիմնավորվածությունը երաշխավորվում են տեսական-մեթոդաբանական դրույթների ու հայեցակարգերի համալիր վերլուծությամբ, հետազոտության տրամաբանությանը, օբյեկտին, առարկային, նպատակին, խնդիրներին համարժեք օգտագործված տեսական և էմպիրիկ մեթոդներով, հետազոտության տեսական դրույթների փորձարարական հիմնավորմամբ, գիտափորձի համակարգված բնույթով, ստացված արդյունքների համալիր վերլուծությամբ և դրական դինամիկայով, հետազոտության արդյունքների մշակման մաթեմատիկական և վիճակագրական մեթոդների կիրառմամբ, եզրակացությունների հիմնավորվածությամբ:

Հետազոտության փորձաքննությունը և արդյունքների ներդրումը.

Հետազոտության հիմնական տեսական դրույթները և արդյունքները քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնում և ամփոփված են թեմայի վերաբերյալ տպագրված գիտական հոդվածներում:

Հետազոտության արդյունքները փորձարարական աշխատանքների կատարման ընթացքում ներդրվել են հետազոտության բազա հանդիսացած Բեյրութի Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեջի Սիրան Մանուկեան մանկապարտեզում:

Հետազոտության փուլերը.

1-ին նախապատրաստական փուլում (2016-2017թ.թ.) ուսումնասիրվել է հետազոտության հիմնախնդիրներին նվիրված փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական, ազգագրական, մասնագիտական և մեթոդական գրականությունը, որոշվել են հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, ճշգրտվել են հետազոտության հիմնական ուղղությունները, առաջադրվել են օբյեկտը, առարկան, նպատակը, ձևակերպվել են հետազոտության վարկածը և խնդիրները, մշակվել է փորձարարական հետազոտության մեթոդիկան:

2-րդ փուլում (2017-2018թ.թ.) մշակվել են հարցաթերթիկներ, փորձարարական հետազոտության բազա հանդիսացած մանկապարտեզում ձևավորվել են ստուգողական և փորձարարական խմբերը, անցկացվել է

հաստատող գիտափորձը, վերլուծվել, մշակվել, համակարգվել են ստացված նախնական արդյունքները, գործնականորեն ստուգվել են հետազոտության ընթացքում մշակված երաժշտության ուսուցման ձևերի, մեթոդների և տեխնոլոգիաների գործնական կիրառման հնարավորությունները:

3-րդ փուլում (2018-2019թ.թ.) մշակվել է նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման ծրագրի բովանդակությունը, դրա արդյունավետ իրականացման մեթոդիկան և մանկավարժական պայմանները, անցկացվել է ստուգող գիտափորձը, վերլուծվել և ընդհանրացվել են հետազոտության արդյունքները, ձևակերպվել են եզրակացությունները, հիմնավորվել է կիրառված մեթոդիկայի արդյունավետությունը, որի դրական դինամիկան արտացոլվել է համապատասխան աղյուսակներում և տրամագրերում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը. Ատենախոսությունը բաղկացած է՝ ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, վեց հավելվածից, ներառում է 16 աղյուսակ, 9 տրամագիր, 1 գծապատկեր: Ատենախոսության ծավալը կազմում է 175 համակարգչային էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվել են թեմայի արդիականությունը, հիմնահարցի մշակվածության աստիճանը, ներկայացվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, մեթոդաբանական հիմքերը, աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը, գիտական նորույթը, սահմանվել են պաշտպանության ներկայացվող դրույթները, նկարագրվել են հետազոտության իրականացման փուլերը, ներկայացվել է աշխատանքի ծավալը:

Ատենախոսության առաջին՝ «**Հայ երաժշտամանկավարժական մտքի զարգացման պատմական նախադրյալները»** խորագրով գլուխը բաղկացած է երեք ենթագլխից: Առաջին՝ **«Հայ երաժշտական արվեստի սկզբնավորման և զարգացման փուլերը»** ենթագլխում համառոտ ներկայացված են հայ երաժշտամանկավարժական մտքի սկզբնավորման ու զարգացման պատմությունը: Այս ենթագլուխը լիարժեք պատկերացում է տալիս հայ երաժշտության ինքնատիպության ու առանձնահատկությունների, նրա ձևավորման վրա իրենց կնիքը թողած գործոնների մասին:

Երկրորդ ենթագլխում՝ «**Ականավոր երաժիշտ-մանկավարժների գործունեությունը և երաժշտական դաստիարակությունը Հայաստանում XVIII-XX-դարերում»** դիտարկված են հայ երաժշտական ավանդույթների պահպանման խնդիրներն ու հայ երաժշտագիտական մտքի կարևոր ձեռքբերումները:

Հիմնավորվել է, որ այդ դարաշրջանի ամենանշանավոր գործիչներ Ք. Կարա–Մուրզան, Մակար Եկմալյանը, Կոմիտաս վարդապետը՝ հայ ազգային երաժշտական մասնագիտական լեզվի և կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը, իրենց ստեղծագործություններով, մանկավարժական գործունեությամբ շեշտադրել են հայ երաժշտության ինքնատիպությունը:

20-րդ դարասկզբին ձևավորվել է հայ ազգային դասական երաժշտությունն իր հիմնական սկզբունքներով, ոճական արտահայտությամբ և ժանրային բազմազանությամբ:

Երրորդ՝ **«Երաժշտական մանկավարժության ձեռքբերումները և մանուկների համար ստեղծագործող կոմպոզիտորները»** խորագրով ենթագլխում համառոտ տրվում է երեխաների համար ստեղծագործող կոմպոզիտորների ու մանկավարժների գործունեության բնութագիրը:

Հայազգի գիտնական-մանկավարժների ջանքերով ստեղծվել են ազգային մտածողության հիմքով երաժշտական դասագրքեր, նոր մեթոդական ձեռնարկներ, որոնք որակական նոր մակարդակի են բարձրացրել երաժշտության դասավանդումը դպրոցում: Քննարկվել է նոր մոտեցումներով ստեղծված դասագրքերի արդյունավետությունը:

Ատենախոսության **«Նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման տեսական–մեթոդաբանական հիմքերը»** խորագրով երկրորդ գլուխը կազմված է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ **«Նախադպրոցական տարիքի երեխաների «ազգային ինքնություն» և «երաժշտական ընդունակություններ» հասկացության բնութագիրը»** սահմանվել է «Ազգային ինքնություն» հասկացությունը, բնութագրվել են «Ազգային ինքնություն» հասկացության էությունը և կառուցվածքային բաղադրիչները: Հիմնավորվել է հայ ազգային երաժշտության դերը նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման և ձևավորման գործում:

Դիտարկվել են ազգային արժեքների պահպանման ուղիների մշակման և երեխաներին վաղ հասակից ազգային արժեհամակարգով դաստիարակելու խնդիրները: Համեմատվել և վերլուծվել են հայ փիլիսոփաների, հոգեբանների ազգային գործիչների (Գ. Արծրունի, Բ. Մինասյան) ազգային ինքնության վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներն ու ազգապահպան ծրագրերին նվիրված աշխատությունները:

Բնութագրվել են երեխաների ընդունակությունները (ընդհանուր և հատուկ ընդունակություններ) և դրանց զարգացման հնարավորությունները:

Բնութագրվել են երաժշտական ընդունակությունների էությունը և զարգացման մեթոդներն ու միջոցները:

Երկրորդ՝ **«Երաժշտությունը երեխաների դաստիարակության և ազգային երաժշտական մտածողության զարգացման գործընթացում»** խորագիրը կրող ենթագլխում դիտարկվել են երեխաների երաժշտական դաստիարակության անհրաժեշտության և երաժշտական մտածողության զարգացման խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Հիմնավորվել է, որ երեխաների երաժշտական դաստիարակության և երաժշտական մտածողության զարգացման հարցերը մշտապես եղել են հոգեբանական և մանկավարժական գիտությունների, ֆիզիոլոգների, երաժշտագետների, գեղագետների ուշադրության կենտրոնում: Նրանց աշխատություններում առկա է այն գիտական մոտեցումը, որ երաժշտական արվեստը, լինելով հասարակական գիտակցության կարևոր ձևերից մեկը,

համարվում է անձի երաժշտական մտածողության զարգացման և գեղագիտական դաստիարակության միջոցներից մեկը:

Ատենախոսության երրորդ՝ **«Նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման մեթոդական ապահովումն ու դրա փորձարարական հիմնավորումը»** խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «**Երաժշտական ընդունակությունների, հուզազգացողությունների և ազգային ինքնության զարգացվածության մակարդակների հայտորոշման չափանիշները, թեստերի բովանդակությունը և մեթոդները**» ներկայացված են փորձարարական հետազոտության խնդիրները և կազմակերպման մեթոդիկան: Բնութագրված են նախադպրոցականների երաժշտական ընդունակությունների բաղադրիչների ուսումնասիրման միջոցները: Մանրամասն ներկայացվել է ազգային ինքնության զարգացվածության մակարդակների հայտորոշման չափանիշները, թեստերի բովանդակությունը և մեթոդները:

Երկրորդ՝ «**Երաժշտության միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման մեթոդիկայի փորձարարական հիմնավորումը**», ենթագլխում ներկայացված են մշակված մեթոդիկայի, առաջադրանքների համալիրի և ծրագրային նյութի նախնական, ուսուցողական և ստուգիչ փորձարկման խնդիրները, դրանց լուծման փուլերը և ստացված արդյունքների վերլուծությունը ստուգողական և փորձնական խմբերում: Մեր մշակած ստեղծագործական առաջադրանքների համալիրի և ծրագրային նյութի ներդնումը իրականացվել է ուսուցման ժամանակակից միջոցներով, փոխներգործուն և մեր հեղինակային մեթոդներով ու տեխնոլոգիաներով՝ այդ թվում նաև տեղեկատվական, որոնց արդյունավետությունը գնահատվել է փորձագետների կողմից:

Հիմնավորվել է, որ գույների, շարժումների և հնչյունների զուգորդմամբ ընթացող թեմատիկ դասերը, համակարգչային երաժշտադիդակտիկ խաղերը նպաստում են նախադպրոցականի ազգային ինքնության և ընդունակությունների զարգացմանը մտավոր գործունեության ակտիվացմանը:

Ուսումնասիրության ընթացքում ապացուցվել է, որ նախադպրոցականներին հաղորդակից դարձնելով ազգային երաժշտական արվեստի ավանդույթներին՝ կարելի է առավել արդյունավետ դարձնել նրանց ազգային ինքնության զարգացման գործընթացը:

Երրորդ՝ **«Փորձարարական և ստուգիչ խմբերի գիտափորձի նախնական և տարեվերջյան արդյունքների վերլուծություն»** ենթագլխում ներկայացվել են նախադպրոցականների երաժշտական ընդունակությունների բաղադրիչների և ազգային ինքնության զարգացմանը նպաստող առաջադրանքների, մակարդակների բացահայտման հայտորոշիչ թեստերի բովանդակությունը, նախնական և տարեվերջյան հետազոտության երեք փուլերի խնդիրները, ստացված արդյունքները և դրանց մեկնաբանումը:

Նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման՝ մեր կողմից մշակած մեթոդիկայի կիրառումը թույլ տվեց հետազոտության ուսուցողական և

ստուգողական փուլերում բացահայտել անցկացված գիտափորձի արդյունքների շարժընթացը: Գիտափորձի նախնական փուլում փորձարարական խմբի 27% և ստուգողական խմբի 27.8% աշակերտներ երաժշտական ընդունակությունների զարգացման միջին ցուցանիշներ ունեին, ավելի փոքր թիվ էին կազմում բարձր մակարդակ ունեցողները՝ համեմատաբար 16.7% և 18.8%: Ցածր մակարդակ ունեին փորձարարական խմբի 54.6% և ստուգողական խմբի 51.9% սովորողներ:

Հետազոտության ուսուցողական փուլում ստացված արդյունքները ցույց տվեցին փորձարարական և ստուգիչ խմբերի սաների երաժշտական ընդունակությունների զարգացվածության միջին մակարդակը, սակայն պատկերը որակապես բարելավվեց փորձարարական խմբում, 23.6%-ով ավելացավ երաժշտական ընդունակության բարձր մակարդակ ունեցողների թիվը. ստուգիչ խմբում դրական դինամիկան կազմեց ընդամենը 6.2%: Երաժշտական ընդունակությունների ցածր մակարդակ ունեցողների թիվը փորձարարական խմբում կրճատվեց 37.1%-ով, իսկ ստուգիչ խմբում 11%-ով:

Հետազոտության ստուգողական փուլում ստացված արդյունքները ցույց տվեցին, որ գիտափորձի ընթացքում կիրառված ուսուցման փոխներգործուն և մշակված հեղինակային մեթոդների, անցկացված միջոցառումների, պարապմունքների, մանկավարժական ներգործության արդյունավետ այլ միջոցների կիրառման արդյունքում իրականացավ նախադպրոցականների երաժշտական ընդունակությունների արդյունավետ զարգացումը: Փորձարարական խմբում 24.4%-ով ավելացավ երաժշտական ընդունակության բարձր մակարդակ ունեցող երեխաների թիվը, ստուգիչ խմբում դրական դինամիկան կազմեց ընդամենը 5.1%: Երաժշտական ընդունակությունների ցածր մակարդակ ունեցող երեխաների թիվը փորձարարական խմբում կրճատվեց 15%, իսկ ստուգիչ խմբում մինչև 9.1%:

Համեմատական ընդհանուր արդյունքներն արտացոլված են թիվ 1 տրամագրում.



Տրամագիր 1.

Նախնական փորձարկման արդյունքները ցույց տվեցին, որ երեխաներն ունեին երաժշտահուզական զգացողության զարգացման միջին մակարդակ:

Սակայն 2018-2019թ.թ. համեմատական արդյունքներով փորձարարական խմբում առավել զարգացում էր նկատվում, քան ստուգիչ խմբում:

Ստացանք հետևյալ պատկերը.

«Երաժշտահուզական զգացողության զարգացումը» «գերազանց» (2017թ.-ի ուս. տարվա սկիզբ) գնահատվեց փորձարարական խմբի երեխաների 27.5%-ի, 2018թ.-ի մայիսին՝ 57.5%-ի, իսկ 2019թ.- ի մայիսին՝ 77.5%-ի և ստուգիչ խմբի երեխաների՝ (2017թ.-ի ուս. տարվա սկիզբ) 29.5%-ի, ապա 2018թ.-ի մայիսին՝ 36.36%-ի, իսկ 2019թ.-ի մայիսին՝ 40.9%-ի մոտ:

Նախնական փորձարկմանը, երկու խմբերում կային «բավարար» ցուցանիշով երեխաներ, որոնց մոտ երաժշտության ընկալումը մակերեսային էր, բացակայում էր կենտրոնացումը ունկնդրման ժամանակ, ինչի պատճառով էլ նրանք չէին կարողանում իրենց հույզերը դրսևորել: «Բավարար»-ը կազմում էր փորձարարական խմբում 41.25%, իսկ ստուգիչում՝ 37.5%, սակայն հաջորդող երկու ստուգումները փոխեցին պատկերը. կտրուկ նվազեց փորձարարական խմբի «բավարար»-ը. 2018թ.- ի մայիսին՝ 12.5%-ով և 2019թ.- ի մայիսին՝ 2.5% -ով: Ստուգիչ խմբում 2018թ.- ի մայիսին՝ 29.5% և 2019թ.-ի մայիսին՝ 25% «բավարար» ունեինք: Ուսուցանվող մեթոդիկան դրական ազդեց նաև թույլ երաժշտա–հուզազգացողությամբ երեխաների վրա:

Համեմատական արդյունքները ներկայացված են թիվ 2 տրամագրում:



Տրամագիր 2

Նախնական փորձարկման երրորդ փուլում ազգային ինքնության զարգացման մակարդակի հետազոտություն նույնպես իրականացվել է

թեստերով. փորձարարական խմբում ունեցանք 5% «գեր.», 17.5% «լավ», քանի որ ճանաչեցին և տարբերեցին հայկական պարեղանակը արաբականից, նվագարանները ընտրելիս դժվարացան, բայց զարկերի զգացողությունը լավ արտահայտեցին: 77.5%-ը «բավ.» ստացան, քանի որ բավարար լսողական փորձ չունեին: Ստուգիչ խմբի 9.09%-ը «գեր.», 18.18%-ը «լավ», 72.7%-ը «բավ.» ստացան:

Հայկական պարային շարժումների կատարման համար «գերազանց» ստացան փորձարարական խմբի 7.5%-ը, 22.5%-ը՝ «լավ»: Ազգային երաժշտությանը համահունչ շարժվելու կարողությունը դեռևս թույլ էր զարգացած 70%-ի մոտ՝ ստացան «բավ.»: Ստուգիչ խմբի 11.3%-ը «գեր.», 22.7%-ը «լավ», 65.9%-ը «բավ.» ստացան:

Արդյունքները ցույց տվեցին, որ երեխաները ունեին մակերեսային պատկերացումներ հայրենիքի, նրա մշակութի, բնաշխարհի վերաբերյալ:

Փորձարարական խմբի միայն 5%-ը «գերազանց» ստացան, որոնք Հայաստան այցելած երեխաներն էին, 22.5%-ը՝ «լավ»: Նրանք գիտեին Հայաստանի խորհրդանիշները, ծանոթ էին հայրենի բնաշխարհի որոշ տեսարանների, ավանդույթները ճանաչելիս դժվարացան, ծանոթ չէին անվանի երաժիշտներին, իսկ հայկական նվագարաններից հիմնականում ճանաչեցին դհոլը և դուդուկը: 72.5%-ը՝ «բավարար», թերի պատասխաններ տվեցին, միայն խորհրդանիշներն ու Արարատը ճանաչեցին: Ստուգիչ խմբի 9.09%-ը «գերազանց», 25%-ը «լավ», 65.9%-ը «բավ.» ստացան:

«Ազգային ինքնության զգացողության» նախնական փորձարկման ընդհանուր արդյունքները. Փորձարարական խմբում «գերազանց» 5.8%, «լավ» 20.8%, «բավարար» 73.3% և ստուգիչ խմբում՝ «գերազանց» 9.8%, «լավ» 21.9%, «բավարար» 68.1%:

Արդյունքներն արտացոլված են ատենախոսությունում առկա 11, 12 աղյուսակներում և թիվ 5, 6 տրամագրերում:

Ուսուցողական երկու տարեշրջանների արդյունքների և ազգային ինքնության զարգացման ընթացքի վերլուծությունը ցույց տվեց փորձարարական խմբերում տեղի ունեցած դրական շարժընթացը, որը նկատվում էր երեխաների վերաբերմունքի, վարքագծի և ինքնաարտահայտման մեջ:

Ստուգողական գիտափորձերի տարեվերջի արդյունքները հետևյալն էին. փորձարարական խումբը արձանագրեց մեծ աճ՝ 2018թ.-ի մայիսին՝ 27.5%, ապա 2019թ.-ի մայիսին՝ 62.5% «գերազանց» արդյունք: Ստուգիչ խմբում նույնպես տեղի ունեցավ աճ, սակայն՝ դանդաղ. 2018թ.-ի մայիսին 13.6%, ապա 2019թ.-ի մայիսին՝ 22.7% զիջելով փորձարարական խմբին՝ 39.8%-ով:

Փորձարարական խմբում «բավ.» ցուցանիշը նվազում է՝ 2018թ.-ի մայիսին՝ այն կազմում է 25%, իսկ 2019թ.- ի մայիսին՝ 5%: Ստուգիչ խմբի «բավ.» ցուցանիշը 2018թ.-ի մայիսին՝ 56.8%, իսկ 2019թ.-ի մայիսին՝ 50% էր:

Փորձարարական խմբում դրական շարժընթաց նկատելի էր ուսուցողական երկու տարիների ընթացքում, երաժշտական գործունեության բոլոր տեսակներում, ազգային երաժշտության հետ սերտ հաղորդակցության շնորհիվ, ինչն էլ նպաստեց երեխաների ազգային երաժշտամտածողության

զարգացմանը:

Ուսուցողական փորձարկման երկու տարիների ընթացքում երեխաներին ծանոթացրինք ազգային երաժշտության ինքնատիպությամբ առանձնացող նմուշներին՝ մեր պատրաստած ծրագրով:

Համեմատական արդյունքներն արտացոլված են թիվ 3 տրամագրում:



Տրամագիր 3.

Գիտափորձի նախնական, ուսուցողական և ստուգիչ փուլերում ստացված տվյալների համեմատական վերլուծությունը ապացուցեց նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման՝ մեր կողմից մշակված ծրագրի և մեթոդական համակարգի մանկավարժական պայմանների արդյունավետությունը, նպատակաուղղվածությունն ու գործուն բնույթը:

Չորրորդ՝ **«Փորձարարական ուսումնական ծրագիր»** վերնագրով ենթագլխում ներկայացված է նախադպրոցականների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման փորձարարական ուսումնական ծրագիրը հիմնված ազգային և համամարդկային երաժշտական ժառանգության լավագույն նմուշների վրա: Ներկայացված են փորձարարական դասընթացի նպատակը, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները, ուսումնական գործունեության տեսակները, դասընթացի կառուցվածքն ու թեմատիկ տրոհումը: Ծրագիրը ներդրվել է Բեյրութի Ազգային Եղիշէ Մանուկեան քոլեջի Սիրան Մանուկեան մանկապարտեզում:

Հետազոտության շրջանակներում իրականացված տեսական և գործնական ուսումնասիրությունների, կատարված վերլուծությունների, հետազոտական և փորձարարական աշխատանքների արդյունքների ամփոփումը հնարավորություն է տվել անելու հետևյալ **եզրակացությունները.**

1. Ներկայումս սոցիալ-փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական իմաստավորման անհրաժեշտություն են ձեռք բերում սփյուռքահայ

երեխաների ազգային ինքնագիտակցության, ազգային մտածողության, ազգային ինքնության զարգացման հիմնախնդիրները: Այս համատեքստում կարևորվում են ազգային-սոցիալական, ազգային-մշակութային գործընթացների և անձի ազգային ինքնության զարգացման հիմնական օրինաչափությունների և սկզբունքների սահմանումն ու համակողմանի ուսումնասիրությունը:

2. Ազգայինը՝ որպես փիլիսոփայական հասկացություն, ներառում է ազգային հանրության կյանքի տարբեր կողմեր, մարմնավորում է ազգային լեզվամտածողությունը և ազգային ինքնագիտակցությունը, ազգային ինքնությունը, ազգի նյութական և հոգևոր արժեքները, հավաքական ոգին, հոգեկերտվածքը, պատմական հիշողությունը, ավանդույթները, սովորույթները, մշակույթը, կրոնը և այլն: Սփյուռքահայ երեխայի համար դաստիարակությունը ազգային բովանդակություն ունի, եթե արտացոլում է հայ ժողովրդի սոցիալ-մշակութային փորձը, երաժշտարվեստը, հոգեբանությունը, հոգևոր-բարոյական արժեքների համակարգը:
3. Ազգային ինքնությունը բնութագրվում է որպես տվյալ ազգի մտածելակերպի, արժեհամակարգի, հոգեկերտվածքի, վարքագծի, դիրքորոշումների, սիմվոլների, բարոյական նորմերի, պատմական հիշողության, սոցիալ-հոգեբանական բնութագրերի ամբողջություն: Անձնային մակարդակում՝ այն բնութագրվում է որպես իր էության գիտակցման, իր յուրահատկության և ազգային պատկանելիության, զգացումների միասնության ըմբռնման, հոգեկերտվածքի, վարքի, բարոյական նորմերի, արժեհամակարգի ամբողջություն: Ազգային ինքնությունը պատմականորեն ձևավորված և սոցիալապես պայմանավորված սոցիալ-հոգեբանական կառույց է, որը բնորոշ է սոցիալականացված յուրաքանչյուր անհատի: Ազգային ինքնությունը ազգային նույնականացման կարևորագույն հատկանիշ է:
4. Հետազոտության շրջանակներում բացահայտված հայ երաժշտության բացառիկ նշանակությունը սփյուռքահայ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման գործում, փաստում է նրա յուրահատուկ ինտեգրված միավոր լինելու հանգամանքը, քանի որ երաժշտական ստեղծագործությունները առնչվում են գրեթե կյանքի բոլոր բնագավառներին, արտացոլելով հայ ժողովրդի կենսակերպը, ավանդույթները և հոգեկերտվածքը:
5. Սփյուռքահայ նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման գործընթացի հիմքում ընկած են անձի ճանաչողական և ստեղծագործական ակտիվության, ազգային երաժշտարվեստի և ուսումնադաստիարակչական գործընթացի ինտեգրման, հայեցի դաստիարակության գաղափարական հիմքերի ամրապնդման, կրթության նկատմամբ մշակութաբանական մոտեցման, գործունային, անձի զարգացման և ուսումնական գործընթացի գործնական ուղղվածության սկզբունքները:
6. Մշակված նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտական ընդունակությունների և ազգային ինքնության զարգացման մեթոդական համակարգը ներառում է հետևյալ բաղադրատարրերը՝ ազգային ինքնության զարգացման ծրագրային նյութը, նպատակները, սկզբունքները,

առանձնահատկությունները, խնդիրները, ձևերը, մեթոդները, տեխնոլոգիաները, միջոցները և ակնկալվող արդյունքները:

7. Առաջադրված մանկավարժական պայմանները՝ զարգացնող երաժշտական միջավայրի ստեղծումը, երեխաների ազգային, տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների, տրամաբանական գործընթացների, արժեքային կողմնորոշումների, հոգևոր պահանջմունքների, ուսումնական դրդապատճառների հաշվառումը ապահովում են նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման մեթոդական համակարգի արդյունավետ գործառնությունը:
8. Մեր կողմից մշակված «Նախադպրոցականների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման ծրագիր»-ը նպաստում է նախադպրոցական հաստատություններում երաժշտության դասերը երաժշտական նոր ժանրերով և ազգային ինքնության զարգացման ներուժ պարունակող ստեղծագործություններով համալրելուն: Ուստի նպատակահարմար է «Կոկոն (4-5տ.)», և «Ծաղիկ (5-6տ.)» դասարանների ուսումնական առարկաների ցանկում ներմուծել «Երաժշտություն և ռիթմիկա» հատուկ դասընթացը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

- «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրտսեր դպրոցականների երաժշտության դասերին»: էջ 45-50 Եր.: ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, «Մանկավարժություն» 6/2016թ.:- 64 էջ:
- «Նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտա–գեղագիտական դաստիարակությունը», «Մանկավարժական միտք» էջ 36-40, Եր.: «Զանգակ» հրատ., 2017թ., 1-2 (64-65):-320 էջ:
- «Հայ երաժշտամանկավարժական մտքի պատմությունից» «Մխիթար Գոշ» Գիտամեթոդական հոդվածներ, էջ 195-205, Վանաձոր «ՍԻՄ տպագրատուն», 2020/N1: - 450 էջ:
- «Ազգային երաժշտության դերը հայ երեխայի կյանքում» Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Գիտական Հոդվածների Պարբերական Ժողովածու, էջ 192-197, Եր.: «Լիմուշ» հրատ., 2020-1 (23): -302 էջ:
- «Նախադպրոցական տարիքի երեխաների երաժշտառիթմական գործունեության բնութագիրը» «Մանկավարժական միտք» 2 (75), էջ 283-292, Եր. 2021թ.,: Հրապարակված է կայքէջում https:// zangak.am/ product_info. php? productsid =1706 - 334 էջ:
- «Развитие армянской музыки, исторический опыт и общеобразовательные подходы новейшего времени», «Музыкальное и культурологическое образование в реалиях современного социума» Том 2, с. 8-16, Редакционно-издательский отдел Пермского государственного гуманитарно-педагогического университета, г. Пермь, (25–26 марта 2021 г.,) – 429 с.

АРУТЮНЯН ГАЯНЕ СЕРГЕЕВНА

МУЗЫКА КАК СРЕДСТВО РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ ДЕТЕЙ ДОШКОЛЬНОГО ВОЗРАСТА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.02 -- «Методика преподавания и обучения» /музыка/.

Защита диссертации состоится 4-го июля 2024г. в 12:00 на заседании специализированного совета "Педагогика" 020 Комитета по Высшему Образованию и Науке при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. В культурно-образовательных процессах современной жизни армянских общин в диаспоре возник новый уровень философского и психолого-педагогического осмысления ряда образовательных проблем, в контексте которых возникла необходимость рассмотрения проблемы национальной идентичности и развития музыкальных способностей у детей дошкольного возраста.

Дошкольное образование детей в армянской диаспоре сегодня сталкивается с острой необходимостью поиска и эффективных путей развития национальной идентичности и музыкальных способностей у детей, а также оперативного внедрения новых методов обучения и их педагогической поддержки. Данный подход к проблеме делает наше исследование весьма актуальным.

Следовательно, в настоящее время в вопросе развития национальной идентичности детей дошкольного возраста, особо акцентируется факт необходимости разработки теоретических и методических принципов и подходов.

Анализ современной психологической, педагогической, методической литературы и существующей ныне практики позволил выявить имеющиеся противоречия между ними, проявляющиеся в процессе формирования национальной идентичности и развития музыкальных способностей у дошкольников во время музыкальных занятиях. Необходимостью разрешения этих проблем определяет актуальность нашего исследования и выбор данной темы.

Цель исследования. Разработка и моделирование методической системы развития национальной идентичности и музыкальных способностей

армянских детей дошкольного возраста, проживающих в диаспоре, посредством национальной музыки, а также рассмотрение педагогических условий ее применения.

Задачи исследования – В соответствии с целью исследования и научной гипотезой сформулированы следующие основные задачи:

1. изучить, проанализировать и в качестве методологической основы диссертации рассмотреть концептуальные подходы и теории, возрастные, психологические и национальные особенности детей дошкольного возраста в рамках их запросов и интересов,
2. выявить и охарактеризовать взаимосвязь, особенности и закономерности процесса формирования национального самосознания и развития музыкальных способностей дошкольников в процессе обучения армянской музыке,
3. при выборе и изучении музыкальных произведений учитывать степень отражения в них национальных особенностей, менталитета, психики, системы ценностей,
4. определить стандарты и показатели, характеризующие уровень развития национальной идентичности и музыкальных способностей армянских детей дошкольного возраста в процессе изучения армянской музыки,
5. на основании научнго опыта разработать, обосновать и внедрить в армянских образовательных учреждениях диаспоры экспериментальную программу музыкального образования, способствующую развитию национальной идентичности и музыкальных способностей детей дошкольного возраста, смоделировать методическую систему ее реализации и необходимые педагогические условия.

Научная новизна исследования.

1. В свете нового подхода к проблеме, являющейся основным тезисом диссертации, с философской, психолого-педагогической, культурологической и этнографической точек зрения по-новому трактована сущность понятий «национальное самосознание», «национальная идентичность» и «музыкальные способности».
2. Впервые вне Армении - в диаспоре (Ливан) была проведена исследовательская работа: изучена важная роль и значение армянской музыки в процессе развития национальной идентичности и музыкальных способностей у армянских дошкольников диаспоры.
3. Выявлены и сформулированы принципы, закономерности и особенности развития национальной идентичности у дошкольников в процессе музыкального образования.

4. В процессе обучения армянской музыке были определены уровни развития национальной идентичности и музыкальных способностей у детей дошкольного возраста армян диаспоры, их критерии и показатели.
5. Разработана образовательная программа, способствующая развитию музыкальных способностей и национальной идентичности, смоделирована методическая система ее эффективной реализации при изучении предмета музыка и ритмика, включающая в себя содержание, принципы обучения, формы, подходы, средства, методы, технологии, задачи, ожидаемые результаты и педагогические условия, обеспечивающие эффективность их применения.

Теоретическая значимость исследования.

1. В рамках исследуемой проблемы были сформулированы и систематизированы теоретические концепции о сути содержании национальной идентичности дошкольников, скорректированы структурные компоненты, уровни развития и критерии самого понятия национальной идентичности.
2. Содержание исследования, полученные результаты, выводы, методические разработки обогатят музыкальную педагогику новыми теоретическими положениями и подходами.

Практическая значимость исследования. Работа может стать практическим пособием для музыкантов-педагогов дошкольных учреждений РА и диаспоры в процессе обучения национальной музыке и сохранения национальной идентичности армянских детей.

Содержание исследования отражено в структуре диссертации, которая состоит из введения, трех глав, заключения, библиографии и приложений, включает также 16 таблиц, 9 диаграмм и 1 рисунок. Объем диссертации составляет 175 страницы компьютерного текста.

По теме диссертации опубликовано 6 статей.

HARUTYUNYAN GAYANE SERGEY

MUSIC AS A MEANS OF DEVELOPING THE NATIONAL IDENTITY OF PRESCHOOL CHILDREN

Dissertation for the PhD degree in Pedagogical Sciences in speciality area 13.00.02 - "Methodology of Teaching and Learning" /music/.

The defence will be held on 4 July, 2024, at 12:00, at the session of Specialised Council "Pedagogy" 020 of the Higher Education and Science Committee to be held at the Armenian State Pedagogical University after Kh. Abovian (Address: 0010 Yerevan, 17 Tigran Mets.

Summary

The relevance of the research: A new level of philosophical and psycho-pedagogical understanding of a number of educational and upbringing issues has emerged in the cultural and educational processes of the contemporary life of Armenian Diaspora communities, in the context of which it has become imperative to consider the problem of development of the national identity and musical abilities of preschool children.

Today, the primary education of children in the Armenian Diaspora is faced with the task of determining the optimal ways of qualitatively organizing the development of children's national identity and musical abilities, and the pressing need for its pedagogical support, which renders our research highly relevant.

In light of this, currently there is a particular emphasis on the necessity of developing theoretical and methodological principles and approaches for developing the national identity of preschool children. According to research, the idea of national identity is directly linked to national self-awareness, and one determines the development of the other.

The analysis of the current situation in psychological, pedagogical, and methodological literature, as well as in practice, made it possible to identify the contradictions in the process of developing preschoolers' national identity and musical abilities during music lessons. The relevance of our research problem and the choice of the research topic are determined by the necessity to solve these contradictions.

The aim of the research:

The research aims to develop and model a methodological framework for the development of the national identity and musical abilities of Armenian preschool

children in the Diaspora through national music, as well as to create pedagogical conditions for its application.

The objectives of the research:

1. To study, analyze, and consider the conceptual approaches and theories regarding the problem, as well as the age-related, psychological, and national characteristics of preschool children within the framework of their needs and interests, as a methodological basis for the thesis;
2. To identify and describe the principles, patterns, peculiarities, and the link between the development of the national identity and musical abilities of preschoolers in the process of teaching Armenian music;
3. During the selection and study of musical compositions, to take into account the degree to which they reflect national characteristics, mentality, psyche, and value system;
4. To define the criteria and indicators that characterize the levels of development of the national identity and musical abilities of Armenian preschool children in the process of teaching Armenian music;
5. To develop, substantiate with scientific experience, and introduce in the Armenian educational institutions of the Diaspora the experimental music education program that promotes the development of the national identity and musical abilities of preschool children, as well as to model the methodological system of its implementation and the necessary pedagogical conditions.

The scientific novelty of the research:

1. The essence of the notions of national self-awareness, national identity, and musical abilities has been disclosed from a philosophical, psycho-pedagogical, cultural, and ethnographic perspective and interpreted in a novel way from the perspective of the problem of research.
2. For the first time, research has been conducted in the Diaspora (Lebanon) on the decisive role and significance of Armenian music in the process of development of the national identity and musical abilities of Armenian preschoolers in the Diaspora.
3. The principles, patterns, and peculiarities of the development of preschoolers' national identity in the process of teaching music have been identified and characterized.
4. The levels, criteria and indicators of the development of the national identity and musical abilities of Armenian preschool children in the Diaspora in the process of teaching Armenian music have been defined.
5. The educational program fostering the development of musical abilities and

national identity has been developed, and the methodological system for its successful implementation has been modeled, which includes the content of the subject of music and rhythmics, teaching principles, forms, approaches, means, methods, technologies, creative tasks, anticipated outcomes, and the required pedagogical conditions ensuring the effectiveness of their application.

The theoretical significance of the research:

1. Within the framework of the investigated problem, the theoretical concepts regarding the content of the national identity of preschoolers have been formulated and systematized, the structural components of the national identity, the levels and criteria of its development have been adjusted.
2. The content of the research, obtained outcomes, conclusions, and methodological developments will enrich music pedagogy with new theoretical provisions and approaches.

The practical significance of the research: The work can be a practical help for the musician-educators of preschool institutions in the Republic of Armenia and the Diaspora in the process of teaching national music and preserving national identity.

The structure and volume of the thesis: The thesis consists of an introduction, three chapters, a conclusion, a list of the used literature, six appendices, 16 tables, 9 diagrams and 1 picture. There are six articles published on the topic of the thesis. The volume of the thesis is 175 computer pages.